

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵԹԵԱՆ

(Բանախօսություն Պ. ՏԻՐԱՆ ՉՐԱՔԵԱՆԻ)

Որքան անելի ուրախ պիտի ըլլայի եթէ այսօր, իր քառասնամեայ յոբելեանին առթիւ ինծի թոյլ տրուեր լոկ կարդալ այստեղ մէկ քանին իր մեծ վայելուչ էջերէն եւ անոնց պսպղուն վեհածածան հոսանքներուն մէջ օրրել ինչ որ մեր ամէնուս հոգիներուն մէջ կայ բարձրագոյն, եւ այս վայելքին իրականութեան թողուլ հոգը վերաբարձելու կամ շատերնուդ մէջ նոյն իսկ ստեղծելու այն հիացիկ յարգանքն որուն իրաւունք ունի բանաստեղծ յոբելարը, եւ այնքան անելի իրաւունք որքան ո՛չ երբեք իր քերթողութեան քառասուն տարիներուն մէջ մտաբերած է ունենալ համեստն Յովհաննէս Սեթեան: Իր բանաստեղծութիւնը, իր բոլոր գրականութիւնը պիտի պերճախօս եւս ճառէր իր մասին քան իմ չքոտի փորձս անոր վրայ խօսելու, որովհետեւ յայնժամ զձեզ պիտի գտնէիք դէմյանդիման եւ նոյն իսկ անձնատուր այն ազնուութեան որ այդ գրականութիւնը կը լեցնէ, կը տոգորէ, որ անոր շքեղութիւնն ու օգտակարութիւնն է միանգամայն, որ գործոն սկզբունքն է անոր. ազնուութիւն որ Սեթեանի մէն մի էջին, մէն մի տողին մէջ կը տրոփէ անդեղեւուն, առնավայել, եղբայրակա՛ն ու քաղցր:

Շատերդ զայն չէք իսկ ճանչնար. միւս կողմէ ինքն ալ ճանչցուելու կամ որ նոյն է՝ հիացուելու հետամուտ չէ եղած բնաւ, եւ ո՛չ իր անձն եւ ոչ իր գործն իրենց ամբողջութեան մէջ ունեցած են սերտ կախում մը ժամանակէն, որպէս զի իր համբաւն ալ այժմէութիւններէն օժանդակուէր: Չկարծուի թէ Յովհաննէս Սեթեան այժմէութեան մարդը չըլլալով բոլորովին, արժանեաց ու պատուոյ հնարաւորութիւնները կը կորսնցնէ. վասն զի քան առօրեայ ներկան անելի ընդհանուր ներկայ մը կը տարածուի իւրաքանչիւր ազգի համար. ներկայ մը որ ազգի մը